# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
## 31 դեկտեմբերի 2022թ.

*(Հազար ՀՀ դրամ)*

| | Ծան. | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | | 378,944 | 389,957 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | | (5,035) | (15,751) |
| **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | 4 | **373,909** | **374,206** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | | 9,766 | 26,191 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | | (487) | (531) |
| **ԶՈՒՏ ԿՈՄԻՍԻՈՆ և ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | 5 | **9,279** | **25,660** |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ (վնաս) | | (243,798) | (105,073) |
| Այլ գործառնական եկամուտներ | | 9,269 | 20,004 |
| Այլ գործառնական արդյունք | 6 | (234,529) | (85,069) |
| **ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ** | | **148,659** | **314,797** |
| Վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկումից առաջացած կորուստներ(արժեզրկման վերականգնում) | 7 | 51,504 | (165,042) |
| Ծախսեր անձնակազմի գծով | 8 | (81,320) | (81,731) |
| Վարչական և այլ գործառնական ծախսեր | 9 | (56,112) | (49,963) |
| **ՇԱՀՈՒՅԹ ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ** | | **62,731** | **18,061** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 10 | (59,702) | (24,872) |
| **ՇԱՀՈՒՅԹ ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ** | | **3,029** | **(6,811)** |
| ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ | | | |
| Հոդվածներ որոնք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատում | | | |
| Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ | | | |
| ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ | | - | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ | | **3,029** | **(6,811)** |

Սույն Ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 23.03.2023թ.

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն Աննա Դարբինյան

Գլխավոր հաշվապահ Վահե Գրիգորյան
(փորձագետ հաշվապահ)

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
### 31 դեկտեմբերի 2022թ.

*(Հազար ՀՀ դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծան. | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 11 | 67,226 | 155,939 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | | - | 59,814 |
| Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխատվություններ | 12 | 2,285,025 | 2,372,684 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 13 | 173,719 | 193,168 |
| Այլ ակտիվներ | | 19,169 | 18,456 |
| ***Ընդամենը՝ ԱԿՏԻՎՆԵՐ*** | | **2,545,139** | **2,800,061** |
| **Պարտավորություններ** | | | |
| Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր | 14 | - | - |
| Փոխառություններ | 15 | 47,595 | 203,937 |
| Ընթացիկ հարկի գծով պարտավորություն | | | |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 16 | 24,254 | 26,263 |
| Այլ պարտավորություններ և պահուստներ | 17 | 79,010 | 58,610 |
| ***Ընդամենը՝ պարտավորություններ*** | | **150,859** | **288,810** |
| **Սեփական Կապիտալ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 18 | 1,616,700 | 1,616,700 |
| Պահուստներ՝ | | | |
| Գլխավոր պահուստ | | 112,868 | 110,289 |
| Վերագնահատման պահուստներ | | 133,484 | 150,170 |
| Կուտակված շահույթ (վնաս) | | 531,228 | 634,092 |
| ***Ընդամենը՝ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ*** | | **2,394,280** | **2,511,251** |
| ***Ընդամենը՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ*** | | **2,545,139** | **2,800,061** |

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Աննա Դարբինյան

Գլխավոր հաշվապահ (փորձագետ հաշվապահ)՝ Վահե Գրիգորյան

«Գլաձոր Ունիվերսալ Վարկային կազմակերպություն» Gladzor Universal Credit Organization 01500346 — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՓԲԸ REPUBLIC OF ARMENIA YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
## 31 դեկտեմբերի 2022թ.

| | Բաժնետիրական կապիտալ | Գլխավոր պահուստ | Ոչ ընթացիկ ակտիվ-ների վերագնա-հատման պահուստ | ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված արժ-զրկում | Չբաշխված շահույթ/ վնաս | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդն առ 01 հունվարի 2021թ.** | 1,616,700 | 97,862 | 166,855 | 57,193 | 699,452 | 2,638,062 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | | | | (41,713) | 34,902 | (6,811) |
| Հիմնական միջոցի պահուստի ճշգրտում | | | (16,685) | | 16,685 | - |
| Շահութաբաժիններ | | | | | (120,000) | (120,000) |
| Մասհանումներ գլխավոր պահուստին | | 12,427 | | | (12,427) | - |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.** | 1,616,700 | 110,289 | 150,170 | 15,480 | 618,612 | 2,511,251 |
| **Մնացորդն առ 01 հունվարի 2022թ.** | 1,616,700 | 110,289 | 150,170 | 15,480 | 618,612 | 2,511,251 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | | | | (24,971) | 28,000 | 3,029 |
| Հիմնական միջոցի պահուստի ճշգրտում | | | (16,686) | | 16,686 | - |
| Շահութաբաժիններ | | | | | (120,000) | (120,000) |
| Մասհանումներ գլխավոր պահուստին | | 2,579 | | | (2,579) | - |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.** | 1,616,700 | 112,868 | 133,484 | (9,491) | 540,719 | 2,394,280 |

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն Աննա Դարբինյան

Գլխավոր հաշվապահ Վահե Գրիգորյան
(փորձագետ հաշվապահ)

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ
### 31 դեկտեմբերի 2022թ.

*(Հազար ՀՀ դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2022 թ. | 2021 թ. |
|---|---|---|
| Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից | | |
| Ստացված տոկոսներ | 332,026 | 351,246 |
| Ստացված միջնորդավճարներ | 2,376 | 9,056 |
| Կորուստների վերականգնում | 171,088 | 184,624 |
| Վճարված տոկոսներ | (1,129) | (14,876) |
| Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | (57,907) | (53,683) |
| Վճարված հարկեր | (69,846) | (53,967) |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները** | 376,608 | 422,400 |
| **Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)** | | |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | - | - |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | (193,352) | 58,305 |
| Ներգրավված վարկերի ավելացում(նվազում) | - | - |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | (22,026) | (19,629) |
| **Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր** | 161,230 | 461,076 |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթերի նվազում (ավելացում) | - | - |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (3,298) | (378) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | | |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | (3.298) | (378) |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | |
| Վճարված շահաբաժիններ | (117,558) | (101,629) |
| Փոխառությունների զուտ հոսքեր | (119,456) | (127,930) |
| Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում) | (278) | (74,105) |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում | - | - |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | (237,292) | (303,664) |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | (79,360) | 157,034 |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | (9,353) | (5,255) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում** | 155,939 | 4,160 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում** | 67,226 | 155,939 |

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն — Աննա Դարբինյան

Գլխավոր հաշվապահ
(փորձագետ հաշվապահ) — Վաչե Գրիգորյան

«Գլաձոր» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն
Gladzor Universal Credit Organization
01500346

## ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Գլաձոր» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ` Ընկերություն) ստեղծվել է «Գլաձորբանկ» ՓԲԸ-ի գործունեության տեսակի` որպես վարկային կազմակերպության փոփոխման 27.05.2003թ. թիվ 01-246 միջնորդագրի և ՀՀ Կենտրոնական Բանկի խորհրդի` թիվ 83 բզ (Ա) որոշմամբ, և համարվում է «Գլաձորբանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդը: Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԿԲ խորհրդի 01.07.2003թ. թիվ 224 Ա որոշմամբ, փոփոխված ՀՀ ԿԲ խորհրդի 07.04.2010թ-ի թիվ 1/295 Ա որոշմամբ գրանցման վկայական թիվ 5: Համաձայն ՀՀ ԿԲ-ի կողմից տրամադրված թիվ 5 լիցենզիայի Ընկերությունը կարող է իրականացնել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները` կանխիկ և անկանխիկ:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է մասնակիցների կողմից ձեռք բերված բաժնետոմսերի անվանական արժեքից, կազմում է 1.616.700.000 (մեկ միլիարդ վեցը հարյուր տասնվեց միլիոն յոթը հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ներառում է 32314 սովորական և 20 փոփոխական շահաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր, յուրաքանչյուրը` 50 000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Հայտարարված կանոնադրական կապիտալն ամբողջովին համալրված է: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է` ՀՀ ք.Երևան, Չարենցի 1Բ թիվ 42: Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմում է 15 աշխատակից (2021թ.-ին` նույնպես 15 աշխատակից):

### 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

#### 2.1 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից մշակված և հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՖՀՆՄՍ) և Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների համաձայն: Համեմատական տեղեկատվությունը և ֆինանսական հաշվետվությունները ներառում են Ընկերության ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական հոսքերը 31.12.2022թ. ավարտված տարվա համար:

#### 2.2 ՉԱՓՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա` Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով` հազարների ճշտությամբ:

#### 2.3 ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ և ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ընկերության ֆունկցիոնալ արժույթ է հանդիսանում ՀՀ դրամը, քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

#### 2.4 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ: